Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-2-25.6-Մ2-2 գլխավոր մշտադիտարկող(2024-01-19)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Փրկարար ծառայություն | Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն (վարչություն) | մոնիտորինգի և կանխատեսման բաժին | գլխավոր մշտադիտարկող, (27-2-25.6-Մ2-2)

1.2 Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մշտադիտարկողն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մշտադիտարկողի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս գլխավոր մշտադիտարկողը:

1.4 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Դավթաշեն վարչական շրջան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փողոց, 109/8

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. իրականացնում է ըստ անհրաժեշտ ուղղությունների և ոլորտների մշտադիտարկման արդյունքների ձեռք բերման մշակման, ընդհանրացման աշխատանքները.

2. իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում արտակարգ իրավիճակների, արտակարգ դեպքերի, պատահարների վերաբերյալ շտեմարանների արդիականցման աշխատանքները.

3. իրականացում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ մշտադիտարկման արդյունքների, գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում և փոխանակում.

4. իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված արտակարգ իրավիճակների, արտակարգ դեպքերի, պատահարների մշտադիտարկման արդյունքների վերլուծություն.

5. իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում արտակարգ իրավիճակների, արտակարգ դեպքերի, պատահարների մշտադիտարկման, մոդելավորման և կանխատեսման արդյունքների և իրավիճակի հնարավոր վատթարացման մասին շահագրգիռ մարմինների և պաշտոնատար անձանց ժամանակին իրազեկման աշխատանքները.

6. իրականացում է արտակարգ իրավիճակների բնագավառում տարաժամկետ կանխատեսումների հետ կապված աշխատանքներ:

Իրավունքները.

· մասնակցել տարերային, տեխնածին, սոցիալ-կենցաղային բնույթի արտակարգ իրավիճակների, արտակարգ դեպքերի, պատահարների առաջացման վտանգների և ռիսկերի գնահատման, պլանավորման և տարամակարդակ որոշումների ընդունմանը.

· ստանալ Նախարարության, Ծառայության ստորաբաժանումներից, այլ մարմիններից ըստ ոլորտի ստացված տեղեկատվություն.

· հնարավոր իրավիճակների մոդելավորման, երկրատեղեկատվական համակարգերի (ԵՏՀ) արդյունավետ կիրառման համար օգտագործել Կենտրոնի շտեմարանները, տեղեկատվական և թվային բազաները,

· համագործակցել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ մշտադիտարկման արդյունքների, անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման և փոխանակման համար:

Պարտականությունները.

· մշակել Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացված մոնիտորինգի, դրանց արդյունքների և կանխատեսումների մասին տեղեկատվությունը և հավաքագրված տվյալները.

· Ներկայացնել առաջարկություններ մշտադիտարկման, իրավիճակի մոդելավորման և կանխատեսման գործընթացի կատարելագործման և արդիականացման, ինչպես նաև տարաբնույթ ոլորտներում և արտակարգ իրավիճակներում արդյունավետ կիրառման ուղղությամբ.

§ վերլուծել և գնահատել արտակարգ իրավիճակներից, դեպքերից, պատահարներից սոցիալ-տնտեսական ոլորտին հասցվող հնարավոր հետևանքները. և ներկայացնել առաջարկություններ.

§ ներկայացնել հաշվետվություններ կատարված աշխատանքների, հետազոտությունների, մոնիտորինգային տվյալների արդյունքների և կանխատեսումների մասին.

§ ներկայացնել առաջարկություններ տարաբնույթ և քաղաքացիական պաշտպանության պլաններում հնարավոր իրավիճակի բնութագրերում ուղղումներ, ճշգրտումներ անելու վերաբերյալ.

§ նախապատրաստել մոնիտորինգի և վերլուծությունների արդյունքում համապատասխան նյութեր, հաշվարկներ, ԵՏՀ շերտեր՝ կանխատեսումներ իրականացնելու համար:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

- ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության

բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Փոփոխությունների կառավարում
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: